ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 10 » օգոստոս 2022թ. No 3648 - Ա

# ԲԵԼԱՌՈՒՍԻ ՌՈՒԲԻԿՈՆ ՍՊԸ, 62Բ, Մ. ԳՈՐԿԻ Փ., ՎԻՏԵԲՍԿ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ (ԴԵՂԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ԻՐԱՎԱՏԵՐ՝ ՌՈՒԲԻԿՈՆ ՍՊԸ, 62Բ, Մ. ԳՈՐԿԻ Փ., ՎԻՏԵԲՍԿ ԲԵԼԱՌՈՒՍ «ԱՆԳԻՍԵՊՏԻՆ ՔԼՈՐՀԵՔՍԻԴԻՆ (ՔԼՈՐՀԵՔՍԻԴԻՆԻ ԴԻԱՑԵՏԱՏ), ՏԵՏՐԱԿԱՅԻՆ (ՏԵՏՐԱԿԱՅԻՆԻ ՀԻԴՐՈՔԼՈՐԻԴ) ՑՈՂԱՇԻԹ ՏԵՂԱՅԻՆ ԿԻՐԱՌՄԱՆ 1.2ՄԳ/ՄԼ+0.6ՄԳ/ՄԼ; 25ՄԼ ՇՇԻԿ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ մասի 2-րդ կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 162-Ն որոշման հավելված 1-ի 30-րդ կետը, «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի փորձաքննության 28.07.2022 թվականի N 0103092822 բացասական եզրակացությունը՝ Բելառուսի Ռուբիկոն ՍՊԸ, 62Բ, Մ. Գորկի փ., Վիտեբսկ արտադրության (դեղի գրանցման հավաստագրի իրավատեր՝ Ռուբիկոն ՍՊԸ, 62Բ, Մ. Գորկի փ., Վիտեբսկ Բելառուս «Անգիսեպտին քլորհեքսիդին (քլորհեքսիդինի դիացետատ), տետրակային (տետրակայինի հիդրոքլորիդ) ցողաշիթ տեղային կիրառման 1.2մգ/մլ+0.6մգ/մլ; 25մլ շշիկ» դեղի անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման վերաբերյալ փորձագիտական թիվ 20818 առ 28.07.2022թ. բացասական եզրակացությունը, առ այն, որ դեղի որակի փորձաքննության արդյունքները չի համապատասխանում Անգիսեպտին ցողաշիթի նոմինալ ծավալ կետով: Հիմք՝ լաբորատոր փորձաքննության եզրակացություն R-2022-95, 24.05.2022:

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1.Մերժել Բելառուսի Ռուբիկոն ՍՊԸ, 62Բ, Մ. Գորկի փ., Վիտեբսկ արտադրության (դեղի գրանցման հավաստագրի իրավատեր՝ Ռուբիկոն սպը, 62բ, մ. Գորկի փ., Վիտեբսկ Բելառուս «Անգիսեպտին քլորհեքսիդին (քլորհեքսիդինի դիացետատ), տետրակային (տետրակայինի հիդրոքլորիդ) ցողաշիթ տեղային կիրառման 1.2մգ/մլ+0.6մգ/մլ; 25մլ 22հկ» դեղի գրանցումը Հայաստանի Հանրապետությունում:

2. ՀՀ առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝

1) սույն հրամանը 2-օրյա աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ձևով էլեկտրոնային փոստի միջոցով՝ առաքել հայտատուին:

3. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում վարչական վարույթի մասնակցին իրազեկելուն հաջորդող օրվանից:

4. Սույն հրամանը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով սահմանված կարգով և ժամկետներում՝ վարչական կարգով կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում՝ դատական կարգով:

Ա.ԱՎԱՆԵՍՅԱՆ

Invalid signature

X 

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157